ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/183

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 18.08.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/12063-2020 գրությամբ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 11.08.2020թ. թիվ 04.1/31.2/20753-20 գրության հիման վրա, 13.08.2020թ. թիվ 26/26-1/12063-2020 գրությամբ նախաձեռնել է «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

« Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/133» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 24-րդ կետի համաձայն՝ ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները՝

ա. «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «40» միավոր՝ լավագույն առաջարկ: Լավագույն առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների որակավորումները,

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

ա) մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում շենքերի և շինությունների կապիտալ հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցած լինելը:

բ) սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները:

Հայտերի գնահատման չափանիշները՝

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը
Մասնագիտական փորձառություն	40
Աշխատանքային ռեսուրսներ	30
Գնային պայման	30
Ընդամենը	100

Մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության՝

7.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

-հավելված 1-ում բացակայում է իրական շահառու հանդիսացող անձի անձը հաստատող փաստաթղթի տեսակը,

-կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում բացակայում է մասնագիտների գործունեության ոլորտը, ինչպես նաև հստակ չէ աշխատանքային փորձի ժամանակահատվածը,

-բացակայում են կատարողական ակտերի, հանձնման-ընդունման արձանագրություններ կամ այլ փաստաթղթերի պատճենները, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի պատշաճ կատարման լինելը:

8.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 7.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.08.2020թ. ծանուցման համաձայն՝ «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/133» ծածկագրով կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման

գործընթացին «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

-հավելված 1-ում բացակայում է իրական շահառու հանդիսացող անձի անձը հաստատող փաստաթղթի տեսակը,

-կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում բացակայում է մասնագիտների գործունեության ոլորտը, ինչպես նաև հստակ չէ աշխատանքային փորձի ժամանակահատվածը,

-բացակայում են կատարողական ակտերի, հանձնման-ընդունման արձանագրություններ կամ այլ փաստաթղթերի պատճենները, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի պատշաճ կատարման լինելը:

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը գնահատող հանձնաժողովը կասեցնում է գնահատման գործընթացը և առաջարկում Ձեզ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:»

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության՝

9.2 կետի համաձայն՝ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամպատասխանությունները շտկվել են մասնակի, մասնավորապես, նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

11.2 կետի համաձայն՝ հիմք ընդունելով արձանագրության 9.2 կետը՝ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Ինչպես արդեն նշել ենք, ՍՊԸ-ի հայտը մերժվել է մասնագիտական փորձառության բացակայության հիմքով, այսինքն այն հիմքով, որ նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք ուշադրություն դարձնել Ընթացակարգի հրավերի 2.4-րդ կետի պահանջներին, որի համաձայն՝ ոչ գնային պայմանների գնահատման չափանիշներն են՝

ա. «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «35» միավոր՝ լավագույն առաջարկ: Լավագույն առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների որակավորումները,

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

ա) մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայության ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Հայտերի գնահատման չափանիշները՝

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը
Մասնագիտական փորձառություն	40
Աշխատանքային ռեսուրսներ	30
Գնային պայման	30
Ընդամենը	100

Մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

Վերոհիշյալից ուղղակիորեն բխում է, որ նախ, մասնագիտական փորձառությունը հանդիսանում է մասնակցի ոչ գնային պայման:

Իսկ Ընթացակարգի հրավերի 2.4 կետը իմպերատիվ սահմանում է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, այլ ընդամենը ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

Այլ կերպ ասած, եթե մասնակցի մոտ բացակայել է որևէ ոչ գնային պայման, տվյալ դեպքում մասնագիտական փորձառությունը (ըստ գնահատող հանձնաժողովի՝ նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին), ապա ղեկավարվելով Ընթացակարգի հրավերի 2.4 կետի իմեպրատիվ պահանջներով, գնահատող հանձնաժողովը ոչ թե պետք է մերժեր մասնակցի հայտը, այլ իրականացնելով ոչ գնային պայմանների գնահատում, հաներ համապատասխան միավորը տվյալ չափանիշի մասով:

Մինչդեռ այս հիմքով ոչ իրավաչափորեն մերժելով ՍՊԸ-ի հայտը՝ գնահատող հանձնաժողովը ոչ իրավաչորեն «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին կանգնեցրել է նաև «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառվելու վտանգի առջև:

2) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

-հավելված 1-ում բացակայում է իրական շահառու հանդիսացող անձի անձը հաստատող փաստաթղթի տեսակը,

-կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում բացակայում է մասնագիտների գործունեության ոլորտը, ինչպես նաև հստակ չէ աշխատանքային փորձի ժամանակահատվածը,

-բացակայում են կատարողական ակտերի, հանձնման-ընդունման արձանագրություններ կամ այլ փաստաթղթերի պատճենները, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի պատշաճ կատարման լինելը:

Վերը նշված անհամապատասխանությունները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է:

Որից հետո անհասկանալի պատճառներով «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 11.2 կետով գնահատվել է անբավարար և մերժվել է՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով: Գնահատող հանձնաժողովը ընդամենը վերացական նշել է, որ նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Գտնում ենք որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը գործել է ոչ իրավաչափ՝ չհիմնավորելով, թե ներկայացված նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիրը ինչով չի համապատասխանում հրավերի պահանջներին, ինչն էլ հանգեցրել է «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն:

Մինչդեռ Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Վերոնշված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից այդպես էլ անհասկանալի է մնում, թե գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերում հրավերի պահանջների նկատմամբ ինչ անհամապատասխանություններ են արձանագրվել և, այսինքն ակնհայտ է, որ այս մասով

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը հիմնավորված չէ, ինչպես դա պահանջում է Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետը:

Վերոհիշյալի արդյունքում ակնհայտորեն խախտվել է իրավական որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական սկզբունքները (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630, 15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 և 29.01.2008թ. թիվ ՍԴՈ-731 որոշումները):

3) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք դիտարկել նաև մի շատ կարևոր հանգամանք. արդյոք ՍՊԸ-ի կողմից անհասկանալի, չհիմնավորված պատճառներով հայտը մերժելու հանգամանքով պայմանավորված՝ ՍՊԸ-ին կարող է որակվել գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում և արդյոք այդ գործողությունը հիմք է՝ մասնակցին Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու համար:

Որպեսզի մասնակցին վերագրվի գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցը ստանձնած լինի նման պարտավորություն կամ առնվազն այդպիսին որակվի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով, Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը հստակ և սպառիչ սահմանում է այն բոլոր դեպքերը, երբ մասնակցի կողմից դրսևորած վարքագիծը կարող է դիտարկվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, դրանք են.

1. հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող.

2. մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը.

3. ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը:

Որպեսզի Ընկերությանը վերագրվի գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, անհրաժեշտ էր, որպեսզի առկա լիներ Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով նախատեսված որևիցե հիմքերից մեկը:

Փորձենք դիտարկել այդ հիմքերը առանձին-առանձին, բացահայտելով, արդյոք Ընկերության կողմից այդ հիմքերից որևիցե մեկը խախտվել է, թե՝ ոչ:

1. Հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող.

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում առկա չի եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով և Ընթացակարգի հրավերով ամրագրված «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի սահմանափակման որևիցե մի հիմքը, ուստի և գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հավասատումը չի կարող որակվել որպես իրականությանը չհամապատասխանող և այս հիմքով «ՆՈՐԱՅՐ և ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում որակավորման չափանիշների պահանջներին մասին հայտով «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը չի կարող որակվել որպես իրականությանը չհամապատասխանող և այս հիմքով «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնվված պարտավորության խախտում:

Ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը:

«Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնվված պարտավորության խախտում, քանի որ դեռևս «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն դեռևս չի ճանաչվել ընտրված մասնակից և դեռևս գնահատող հանձնաժողովի կողմից չի պահանջվել ներկայացնելու որակավորման ապահովում:

2) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել նաև այն հանգամանքի վրա, որ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն միայն կարող է ենթադրել, թե ինչի համար է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել, որ Ընկերության կողմից չի շտկվել անհամապատասխանությունները, և ներկայացրած

համանման պայմանագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես ենթադրում ենք հետևյալ.

Ընկերության կողմից ներկայացվել է 15.06.2017թ. կնքված ԲԸՀԾՁԲ-10/3-2 ծածկագրով պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը կազմել է 7 900 000 ՀՀ դրամ, ներկայացվել է նաև 05.02.2018թ. թիվ 1 Համաձայնագիրը, 18.02.2019թ. կնքված թիվ 2 Համաձայնագիրը և 10.12.2018թ. թիվ 2 Փոփոխությունը՝ համապատասխան հաշիվ ապրանքագրերով և հանձնման-ընդունման արձանագրություններով:

Փաստորեն, Պատվիրատուի կողմից կատարված տնտեսումների արդյունքում «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն ԲԸՀԾՁԲ-10/3-2 ծածկագրով պայմանագիրը կատարել է 7.294.430 ՀՀ դրամով, որի վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունները ամբողջությամբ ներկայացվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի, ինչը լիովի ապացուցում է, որ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն պատշաճ կատարել է ԲԸՀԾՁԲ-10/3-2 ծածկագրով պայմանագիրը, և նման պայմաններում որևէ անհամապատասխանություն չէր կարող արձանագրվեր:

Ի մի բերելով վերոհիշյալը՝ կարելի է փաստել, որ տվյալ դեպքում առկա չի եղել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/183 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.08.2020թ. թիվ

04.1/31.2/20753-20 գրությամբ հայտնել է, որ նախարարության կողմից 2020 թվականի հուլիսի 30-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/133» ծածկագրով կազմակերպված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների գնման գործընթացին հայտ է ներկայացրել «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն: Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով, որ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված չեն հրավերի պահանջներին համապատասխան՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործընթացը կասեցվել է և 2020 թվականի օգոստոսի 4-ին առաջարկվել է վերջինիս մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը, սակայն դրանք ամբողջությամբ չեն շտկվել և Ընկերության հայտը մերժվել է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է Ընկերության վերաբերյալ տվյալները և համապատասխան հիմքերը, միաժամանակ խնդրելով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հաշվառել տեղեկատվությունը՝ մասնակցին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով սույն ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/183 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/183 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստը.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/133» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***<u>23.07.2020թ.:</u>***

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/12063-2020 գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 11.08.2020թ. թիվ 04.1/31.2/20753-20 գրությունը և կից փաստաթղթերը, Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) **գնման գործընթացի կազմակերպում** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է**, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝**

1) **պատասխանատու ստորաբաժանում,** և

2) **գնումները համակարգող**

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **<u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում</u> պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:…

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/133» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել են ***<u>23.07.2020թ.:</u>***

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, նույն արձանագրության համաձայն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել

գնահատման գործընթացը կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ վերջինս արձանագրված անհամապատասխանությունները շտկել է մասնակի, մասնավորապես՝ նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված ու տեղեկագրում որպես գնումների պլան հրապարակված տեղեկատվությունը և արձանագրել, որ Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում ***23.07.2020թ.*** հրապարակվել է 2020 թվականի գնումների պլանում փոփոխությունների և/կամ լրացումների մասին ծանուցումը՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի 20 մայիսի N 231-Ն հրամանով հաստատված գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու ծանուցման օրինակելի ձևին համապատասխան, մինչդեռ արձանագրում եմ, որ առկա չէ ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգի» համաձայն և սահմանված պահանջներին համապատասխան տեղեկագրում հրապարակված գնումների պլանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/133» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ իրավական հիմքի բացակայության պայմաններում կազմակերպված ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության, ուստիև հնարավոր չէ արձանագրել «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/12063-2020 գրությամբ «Նորայր և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**